Հայաստանում կայացել է ճապոնական ֆիլմերի 17-րդ փառատոնը

2023 թվականի հոկտեմբերի 11-ից 24-ը (ընդհանուրը՝ 6 օր) Երևանում, Արմավիում, Գյումրիում, Վանաձորում և Եղեգնաձորում անցկացվել է ճապոնական ֆիլմերի 17-րդ փառատոնը՝ Հայաստանում Ճապոնիայի դեսպանության, Ճապոնիա հիմնադրամի և «Հիկարի» հայ-ճապոնական գիտակրթամշակութային կենտրոնի համատեղ ջանքերով:

Փառատոնի շրջանակներում ցուցադրվել են տարատեսակ ֆիլմեր, այդ թվում՝ դրամա, սամուրայական և անիմացիոն, և ավելի քան 1000 հանդիսատես է այցելել դիտելու ֆիլմերը:

Երևանի «Մոսկվա» կինոթատրոնում բացման արարողության ժամանակ ողջույնի խոսքով հանդես է եկել Հայաստանում Ճապոնիայի դեսպան պարոն ՖՈՒԿՈՒՇԻՄԱ Մասանորին և «Հիկարի» կենտրոնի ներկայացուցիչ Տաթև Բաբայանը:

Փառատոնի նպատակն էր խթանել Ճապոնիայի և Հայաստանի միջև մշակութային փոխանակումը, ինչպես նաև բարձրացնել ճապոնական կինոյի իրազեկվածությունն ու գնահատումը: Այն հայ հանդիսատեսին հնարավորություն ընձեռեց զգալու ճապոնացի կինոարտադրողների յուրահատուկ ոճերն ու տեխնիկան:

Դեսպան Ֆուկուշիմայի ողջույնի խոսքը

«Հիկարի» կենտրոնի ներկայացուցիչ Տաթև Բաբայանի ողջույնի խոսքը

Ֆիլմերի փառատոնը Երևանում

Ֆիլմերի փառատոնը Երևանում

Արմավիրի համայնքապետ պարոն Դավիթ Խուդաթյան ողջույնի խոսքը

Գյումրու համայնքապետի տեղակալ պարոն Վահագն Մկրտչյանի ողջույնի խոսքը

Լոռու մարզպետի տեղակալ պարոն Գոռ Ասրյանի ողջույնի խոսքը

Վայոց ձորի մարզպետ պարոն Արարատ Գրիգորյանի ողջույնի խոսքը